Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 289 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	2020-2023 թվականների ընթացքում պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից տեղահանված, մարտական հերթապահություն իրականացրած Հայաստանի Հանրապետության բուհերում սովորող Հայաստանի Հանրապետության և Ջավախքի ուսանողների ուսման և բնակարանի վարձերի, բուժման ծախսերի մասնակի փոխհատուցում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Արագածոտնի և Շիրակի մարզերում Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին հագուստի, կոշիկի, սննդի և կենցաղային տեխնիկայի տրամադրում, Լեռնային Ղարաբաղի մշակույթի մասին պատմող, Հայաստանի Հանրապետության գիտական, հասարակական, հայ լեզվաբանության, հայոց պատմության, հայ գրականության առարկաներն ուսումնասիրող տարբեր հեղինակների գրքերի տպագրական ծախսերի մասնակի փոխհատուցման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ (քաղ. Երևան, Մխիթար Հերացու 16/48, ՀՎՀՀ՝ 01533651)՝ բարերարներից հանգանակված միջոցներով
4.	Ծրագիրը կատարողը	Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ (Երևան, Մխիթար Հերացու 16/48, ՀՎՀՀ՝ 01533651)

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	80,110,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	2020-2023 թվականների ընթացքում պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք, ընտանիքներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզերում ապրող սոցիալապես անապահով ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Լեռնային Ղարաբաղից տեղահանված, Հայաստանի Հանրապետության և Ջավախքի՝ Հայաստանի Հանրապետության բուհերում սովորող ուսանողների ուսման և բնակարանի վարձերի, բուժման ծախսերի մասնակի փոխհատուցում՝ 49,410,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը. 2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Արագածոտնի և Շիրակի մարզերում Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին հագուստի, կոշիկի, սննդի և կենցաղային տեխնիկայի տրամադրում՝ 9,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը. 3) Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին սոցիալական աջակցությունն ապահովելու համար «Ֆորդ Բրոնկո Սպորտ» ավտոմեքենայի ներմուծում, որը նախատեսված չէ ծրագրի ավարտից հետո վաճառման կամ օտարման՝ 8,200,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը. 4) Լեռնային Ղարաբաղի մշակույթի մասին պատմող տարբեր հեղինակների, Հայաստանի Հանրապետության գիտական, հասարակական, հայ լեզվաբանության, հայոց պատմության, հայ գրականության առարկաներն ուսումնասիրող տարբեր հեղինակների

		գրքերի տպագրական ծախսերի մասնակի փոխհատուցում՝ 13,500,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 ֆկանի դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) հագուստի, կոշիկի, սննդի և կենցաղային տեխնիկայի ձեռքբերում՝ 9,000,000 դրամ. 2) «Ֆորդ Բրոնկո Սպորտ» ավտոմեքենայի ներմուծում՝ 8,200,000 դրամ. 3) տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 13,500,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

23.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ